ԹԱԼԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ Ն.ԲԱԶՄԱԲԵՐԴԻ ՄԻՆԻ ՖՈՒՏԲՈԼԻ ԴԱՇՏԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՀՀ ԱՄ ԹՀ-ԳՀԱՇՁԲ-25/135

ք. Թալին «27» հոկտեմբերի 2025թ.

Թալինի համայնքապետարանը, ի դեմս համայնքի ղեկավար Տավրոս Սափեյանի, որը գործում է համայնքապետարանի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և **«Շին Կոնստրակտ»** ՍՊԸ և «ԱԲԱԿ» ՍՊԸ **կոնսորցիումը,** ի դեմս տնօրեններ Ն. Ապրեսյանի և Ա. Ժամկոչյանի, որոնք գործում են ընկերությունների կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված նախագծային փաստաթղթերով, ներառյալ դրանցով նախատեսված տեխնիկական բնութագրերին և երաշխիքային սպասարկման պայմաններին համապատասխանող նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների տեղադրումը (օգտագործումը) և ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված **«Ն.Բազմաբերդի մինի ֆուտբոլի դաշտի կառուցման**

Աշխատանքների անվանումը

աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար: Սույն պայմանագրի անբաժանելի մաս է հանդիսանում ՀՀ ԱՄ ԹՀ-ԳՀԱՇՁԲ-25/135 ծածկագրով գնման ընթացակարգին մասնակցելու շրջանակում Կապալառուի կողմից հայտով ներկայացված նախագծային փաստաթղթերով սահմանված տեխնիկական բնութագրերին և երաշխիքային սպասարկման պայմաններին համապատասխանող նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների տեղադրման (օգտագործման) պարտավորության մասին հավաստումը:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները Կապալառուն կատարում է քաղաքաշինական նորմատիվատեխնիկական և հաստատված նախագծանախահաշվային փաստաթղթերին, ինչպես նաև սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ **կողմերի միջև կնքվող պայմանագրի/ համաձայնագրի/ ուժի մեջ մտնելուց հետո 40-րդ օրացուցային օրը ներառյալ:**

աշխատանքների կատարման վերջնաժամկետը

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները սահմանված են սույն պայմանագրի հավելված 2-ում ներկայացված օրացուցային գրաֆիկով :

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի աշխատանքային և տեխնիկական ռեսուրսով, շինարարական նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում սույն պայմանագրի 1.1 կամ 1.2 կետով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները.

3.2.5 Պայմանագրի 3.4.3 կետի 2-րդ ենթակետով նախատեսված գրավոր համաձայնությունը Կապալառուին տրամադրել ...5.... օրվա ընթացքում:Եթե սույն կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն Կապալատուին չի տրամադրում գրավոր համաձայնությունը (անհամաձայնոյթյունը), ապա համաձայնությունը Կապալառուի կողմից համարվում է ստացված: Համաձայնոթյունների ստացման ընթացակարգը կողմերը կարող են իրականացնել նաև էլեկտրոնային փոստի հասցեներին տեղեկատվության փոխանակման միջոցով: Այս դեպքում կողմերը նախապես գրավոր եղանակով փոխանակում են այն էլեկտրոնային փոստերի հասցեները, որոնց պետք է ուղարկվեն տեղեկությունները: Սույն կետով նախատեսված փաստաթղթերը հանդիսանում են կատարողական ակտերի անբաժանելի մասը:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքների առնվազն հարյուր տոկոսը կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր աշխատանքային և տեխնիկական ռեսուրսով , ինչպես նաև անհրաժեշտ շինարարական նյութերով, միջոցներով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել՝

1) շինմոնտաժային աշխատանքների կատարումը քաղաքաշինական նորմատիվատեխնիկական փաստաթղթերի և սույն պայմանագրի պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված ինժեներական հաղորդակցուղիների համակարգերի ( էլեկտրամատակարարման, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխության այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը.

2) նախագծային փաստաթղթերով սահմանված տեխնիկական բնութագրերին և երաշխիքային սպասարկման պայմաններին համապատասխանող նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների տեղադրումը (օգտագործումը)՝ մինչև տեղադրումը (օգտագործումը) դրանց տեխնիկական բնութագրերը, ապրանքային նշանները, ֆիրմային անվանումները, մակնիշները և երաշխիքային ժամկետները նախապես գրավոր համաձայնեցնելով պատվիրատուի հետ:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման (շահագործման) համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր միջոցների հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Պայմանագրով երաշխիքային ժամկետ է սահմանվում Պատվիրատուի կողմից ողջ ծավալով Աշխատանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 365 օր (առնվազն 365 օրացուցային օր): Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված Աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր միջոցների հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:[1]

3.4.10 Կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաներ և այլն) և օգտագործվելիք նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների տեխնիկական բնութագրերին և երաշխիքային ժամկետներին ներկայացվող պահանջները ներկայացված են պայմանագրի N – Հավելվածում:[2]

3.4.11 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

## 4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Ընդ որում սույն պայմանագրի շրջանակներում կատարված և Պատվիրատուին ներկայացված աշխատանքի արդյունքի ընդունումն իրականացվում է, եթե Կապալառուն ամբողջությամբ՝ ամենօրյա ռեժիմով ապահովել է քաղաքաշինական նորմատիվատեխնիկական և հաստատված նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջները, այդ թվում շինարարական հրապարակի պատշաճ կազմակերպումը, կահավորումը, տեխնիկական անվտանգության, սանիտարահիգիենիկ և բնապահպանական (այդ թվում կլիմայի փոփոխության հետ հարմարվողականության միջոցառումները) նորմերը՝ որի վերաբերյալ առկա է շինարարական աշխատանքների կատարման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնող՝ Պատվիրատուի հետ պայմանագիր կնքած կազմակերպության գրավոր հավաստումը:[3]

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված ______ աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար

[1] *Սույն կետը հանվում է պայմանագրի նախագծից, եթե գնման առարկա հանդիսացող շինարարական ծրագիրը պահանջում է նախագծային փաստաթղթեր:*

[2] *Սույն կետը հանվում է պայմանագրի նախագծից, եթե կիրառելի չէ*

[3] *4.1 կետի 2-րդ պարբերությունը հանվում է պայմանագրի նախագծից, եթե գնման առարկա չի հանդիսանում շինարարական ծրագիրը:*

ամագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված տասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված ավարտված շինարարությունն ընդունող հանձնաժողով (այսուհետ՝ ընդունող Հանձնաժողով) ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար.

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում.

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ.

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում.

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարաժամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

## 5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է <u>29340000 </u>(քսանինը միլիոն երեք հարյուր քառասուն հազար) ՀՀ դրամ, որից 4890000 (չորս միլիոն ութ հարյուր իննսուն հազար) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը, ընդ որում՝

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով:

Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիսներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը

կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:[4]

---

[4] *Գանձապետարանում հաշիվներ չունեցող պատվիրատուների դեպքում սույն կետի վերջին պարբերությունը խմբագրվում է հետևյալ բովանդակությամբ. «Ընդ որում գնման դիմաց վճարումն իրականացվում է սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:»*

5.4 Պայմանագրի շրջանակում կատարողական ակտերի դրանց վճարումները իրականացվում են հետևյալ բանաձևով՝ ՎԳ=ՄԳ/ՆԳxԿԾ, որտեղ՝

ՄԳ-ն պայմանագրի 5.1 կետում նշված գինն է (եթե ներառված են մեկից ավել չափաբաժիններ, ապա տվյալ չափաբաժնի գինն է).

ՆԳ-ն հրավերով հրապարակված շինարարական աշխատանքների նախահաշվային գինն է.

ԿԾ-ն տվյալ կատարողական ակտով ներկայացված աշխատանքների ծավալն է գումարային արտահայտությամբ.

ՎԳ –ն ծավալաթերթ-նախահաշվով սահմանված աշխատանքների դիմաց վճարվող գումարն է:

## 6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:[5] Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքի արդյունքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2, 6.3 և 6.5.1 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.5.1 Սույն պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման ողջ ընթացքում քաղաքաշինական նորմատիվատեխնիկական և հաստատված նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջների, այդ թվում շինարարական հրապարակի պատշաճ կազմակերպման, կահավորման, տեխնիկական անվտանգության, սանիտարահիգիենիկ և բնապահպանական (այդ թվում կլիմայի փոփոխության հետ հարմարվողականության միջոցառումների) նորմերի չպահպանման յուրաքանչյուր արձանագրված դեպքի համար Կապալառուի նկատմամբ կիրառվում է պատասխանատվության հետևյալ միջոցները[6].

| N | Խախտումը | Պատասխանատվությունը |
|---|---|---|
| 1 | Կապալառուն չունի շինարարական թափոնների տեղակայման վայրի համար թույլտվություն | Գանձվում է տուգանք՝ պայմանագրով սահմանված ընդհանուր գնի 0.5 տոկոսի չափով |
| 2 | Շինարարական հրապարակից և/կամ տեղամասից հեռացված չեն աղբը, կենցաղային թափոնները և օտար առարկաները (աշխատանքների իրականացման ժամանակահատվածում, ինչպես նաև մինչև շինարարական օբյեկտը սահմանված կարգով շահագործման հանձնելը) | Գանձվում է տուգանք՝ պայմանագրով սահմանված ընդհանուր գնի 0.5 տոկոսի չափով |
| 3 | Հասարակությանն իրազեկելու նպատակով անհրաժեշտ տեղեկատվական վահանակները տեղադրված չեն (ծրագծի սկզբում և վերջում) | Գանձվում է տուգանք՝ պայմանագրով սահմանված ընդհանուր գնի 0.5 տոկոսի չափով |

---

[5] *Եթե պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա, ապա տուգանքը հաշվարկվում է այն համաձայնագրի գնի նկատմամբ, որի շրջանակում արձանագրվել է ստանձնված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հանգամանքը:*
*Եթե պայմանագիրը ներառում է մեկից ավել չափաբաժին, ապա տուգանքը հաշվարկվում է պայմանագրով այդ չափաբաժնի համար սահմանված ընդհանուր գնի նկատմամբ:*

[6] *եթե գնման առարկան չի հանդիսանում շինարարական ծրագիր 6.5.1 կետը հանվում է պայմանագրի նախագծից, իսկ 1.2 կետից հանվում են «և հաստատված նախագծանախահաշվային » բառերը և 6.4 կետից հանվում է 6.5.1 կետին կատարված հղումը:*

| | | |
|---|---|---|
| 4 | Տեղամասերում շինարարական աղբը կուտակված է, թափոնները չեն տեղափոխվել հատուկ հատկացված վայրեր | Գանձվում է տուգանք՝ պայմանագրով սահմանված ընդհանուր գնի 0.5 տոկոսի չափով |
| 5 | Կապալառուի ճամբարում կամ աշխատանքային բազայում առկա չեն սանիտարական պայմաններ | Գանձվում է տուգանք՝ պայմանագրով սահմանված ընդհանուր գնի 0.5 տոկոսի չափով |
| 6 | Կապալառուի ճամբարում կամ աշխատանքային բազայում առկա չեն առաջին բուժօգնության և հակահրդեհային միջոցները | Գանձվում է տուգանք՝ պայմանագրով սահմանված ընդհանուր գնի 0.5 տոկոսի չափով |
| 7 | Շինարարությունում զբաղված ինժեներատեխնիկական, սպասարկման և բանվորական անձնակազմը չեն կրում հատուկ արտահագուստ և տեխնոլոգիական գործընթացներին համապատասխան պաշտպանիչ հանդերձանք (ձեռնոցներ, սաղավարտներ, ակնոցներ և այլն) | Գանձվում է տուգանք՝ պայմանագրով սահմանված ընդհանուր գնի 0.5 տոկոսի չափով |
| 8 | Շինարարական աշխատանքների ընթացքում չի պահպանվում օդի փոշոտվածության կանխարգելման պահանջները (փոշի առաջացնող աշխատանքների դեպքում շինարարական հրապարակը պարբերաբար չի խոնավեցվում ջրի շիթով և այլն) | Գանձվում է տուգանք՝ պայմանագրով սահմանված ընդհանուր գնի 0.5 տոկոսի չափով |
| 9 | Շինարարական նյութերը և թափոնները չեն տեղափոխվում ծածկված բեռնատարներով | Գանձվում է տուգանք՝ պայմանագրով սահմանված ընդհանուր գնի 0.5 տոկոսի չափով |
| 10 | Շինարարական հրապարակում օգտագործվող շինարարական տեխնիկան և մեքենա-մեխանիզմները բավարար տեխնիկական վիճակում չեն (կան ավելորդ արտանետումներ, աղմուկ, վառելիքի և քսայուղերի արտահոսք) | Գանձվում է տուգանք՝ պայմանագրով սահմանված ընդհանուր գնի 0.5 տոկոսի չափով |

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

## 7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:[7]

---

[7] *Պետական բյուջեի միջոցների հաշվին պարտավորություններ չառաջացնող գնումների դեպքում սույն նախադասությունը պայմանագրից հանվում է:*

8.2 Պայմանագրից ծագած կողմի դրամական պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած` հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս

պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ` համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Եթե պայմանագիրն իրականացվում է ենթակապալի պայմանագիր կնքելու միջոցով.

1) Կապալառուն պատասխանատվություն է կրում ենթակապալառուի պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար.

2) պայմանագրի կատարման ընթացքում ենթակապալառուի փոփոխման դեպքում Կապալառուն գրավոր տեղեկացնում է Պատվիրատուին` տրամադրելով ենթակապալի պայմանագրի պատճենը և դրա կողմ հանդիսացող անձի տվյալները` փոփոխությունը կատարվելու օրվանից հինգ աշխատանքային օրվա ընթացքում: Ընդ որում սույն ենթակետի կիրառման դեպքում ենթակապալառու չի կարող հանդիսանալ ՀՀ կառավարության 20.06.2025թ. թիվ 817-Ա որոշման և 2-րդ կետի 2-րդ ենթակետով նախատեսված ցուցակում ներառված կազմակերպությունը:[8]

8.7 Եթե պայմանագիրն իրականացվում է համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով, ապա այդ պայմանագրի մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն: Ընդ որում, կոնսորցիումի անդամի կոնսորցիումից դուրս գալու դեպքում պայմանագիրը միակողմանիորեն լուծվում է և կոնսորցիումի անդամների նկատմամբ կիրառվում են պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցները:[9]

8.8 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը` Կապալառուի առաջարկության առկայության դեպքում` պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կապալառուի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 7 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի` երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները` ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ` բացառությամբ` Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի` պարտավորությունների

---

[8] *Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի իրականացվում ենթակապալի պայմանագիր կնքելու միջոցով:*

[9] *Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի իրականացվում համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով:*

...ապր չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք ...ել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման ...ամար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կապալառուի էլեկտրոնային փոստին:

8.12 Կապալառուն իրավունք ունի պայմանագրի կնքումից հետո Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 48-րդ գլխով սահմանված դեպքերում և կարգով կատարել գնման պայմանագրից ծագող դրամական պահանջի զիջում՝ պահանջի զիջման դիմաց ֆինանսավորման (ֆակտորինգի) պայմանագրի (այսուհետ՝ ֆակտորինգի պայմանագիր) հիման վրա: Ֆակտորինգի պայմանագիրը պետք է սահմանի, որ ֆինանսական գործակալը համաձայն է, որ պայմանագրով նախատեսված հիմքերի առկայության դեպքում Պատվիրատուն վճարումներն իրականացնելիս ապահովի Կապալառուի նկատմամբ տույժերի ու տուգանքների հաշվարկումը և հաշվանցումը վճարվելիք գումարների հետ՝ անկախ պահանջը զիջված լինելու հանգամանքից: Ընդ որում, ֆակտորինգի պայմանագրի հիման վրա պահանջի զիջման մասին գրավոր ծանուցումը (հավելված N 5) ստանալու դեպքում Պատվիրատուն պայմանագրով սահմանված վճարումը կատարում է ֆինանսական գործակալին, եթե ծանուցումը ստացվել է Պատվիրատուի կողմից վճարման հանձնարարագիրը և արձանագրության պատճենը լիազորված մարմնի գանձապետական համակարգ մուտքագրելու օրվան նախորդող օրը:[10]

8.13 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.14 Սույն պայմանագիրը կազմված է __8__ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 ,N 4.1 և N 5 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.15 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

## 9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՊԱԼԱՌՈՒ |
|---|---|
| Թալինի համայնքապետարան<br>ՀՀ Արագածոտնի մարզ,ք.Թալին Գայի 1<br>ՀՀ ՖՆ Գործառնական վարչություն<br>ՀՀ 900462151045<br>ՀՎՀՀ 05030561<br>Համայնքի ղեկավար՝ Տ.Սափեյան<br>-----------------------------<br>/ստորագրություն/<br>Կ.Տ | «Շին Կոնստրակտ» ՍՊԸ<br>ՀՀ ք. Երևան, Լենինգրադյան փ 12շ., բն. 10<br>«Ֆասթ Բանկ» ՓԲԸ<br>Հ/Հ 2621379261721001<br>ՀՎՀՀ 01359835<br>Տնօրեն՝ Ն. Ապրեսյան<br>-----------------------------<br>/ստորագրություն/<br>Կ.Տ |
| | «ԱԲԱԿ» ՍՊԸ<br>ՀՀ ք. Երևան, Սիլիկյան 1/20<br><<Հայէկոնոմբանկ>>ԲԲԸ<br>ՀՀ 163028028518<br>ՀՎՀՀ 01222825<br>Տնօրեն Ա. Ժամկոչյան<br>-----------------------------<br>/ստորագրություն/<br>Կ.Տ |

---

[10] Եթե Պատվիրատուն հանդիսանում է գանձապետարանում հաշիվ չունեցող պատվիրատու, ապա սույն կետը խմբագրվում է՝«վճարման հանձնարարագիրը և արձանագրության պատճենը լիազորված մարմնի գանձապետական համակարգ մուտքագրելու» բառերը փոխարինելով «բանկին վճարման հանձնարարական փալու» բառերով:

*Հավելված թիվ 1*
*«27» հոկտեմբերի 2025թ. կնքված*
*ՀՀ ԱՄ ԹՀ-ԳՀԱԾՁԲ-25/135 ծածկագրով պայմանագրի*

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ
**Сводная ведомость обема работ**

Թալին համայնքի §Ն.Բազմաբերդի մինի ֆուտբոլի դաշտի կառուցման աշխատանքների
**«Строительство мини-футбольного поля Н. Базмаберд» в общине Талин, РА**

| NN | Հիմնավորումը Обоснование | Աշխատանքների անվանումը Название работ | Չափման միավորը Единица измерения | Ծավալը Объем | Միավորի արժեքը Цена единицы | Ընդհանուր արժեքը Всего |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | | հազ. դրամ тыс. Драм | հազ. դրամ тыс. Драм |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 |
| | | Քանդման աշխատանքներ Работы по сносу | | | | |
| 1 | E1-1593 | Գրունտի մշակում մեխանիզմով/հողի շերտի հանույթ, շին աղբի հավաքում/, ինքնաթափ մեքենաների վրա բարձելով Обработка почвы механизированным способом (разработка пласта почвы, сбор строительного мусора), погрузка в самосвалы | մ³ м³ | 552.00 | 0.86 | 474.27 |
| 2 | E1-961 | Գրունտի մշակում ձեռքով Ручная обработка почвы | մ³ м³ | 56.0 | 3.48 | 195.14 |
| 3 | C310-1 տ.մ.կ. 29 k=1.1 | Գրունտի տեղափոխում 1կմ Перевозка грунта 1 км | տ т | 662.40 | 1.17 | 772.70 |
| 4 | C310-1 տ.մ.կ 29 k=1.1 | Շին. աղբի և ավելորդ բնահողի բարձում ինքնաթափ մեքենաների վրա եւ տեղափոխում աղբավայր Погрузка строительного мусора и излишков грунта в самосвалы и вывоз их на полигон | տ т | 67.20 | 2.40 | 161.41 |
| | | **Ընդամենը տվյալ բաժնով Итого по разделу** | | | | 1603.53 |
| | | **Կշիռ (%) Процент (%)** | | | | **5.70%** |
| | | **Կառուցողական աշխատանքներ Строительные работы** | | | | |
| | | **Խամքարբետոնե հենապատերЖелезобетонные подпорные стенки** | | | | |
| 1 | E1-1545 | Գրունտի մշակում մեխանիզմով, կողալիցքով Обработка почвы механизмом, боковая загрузка | մ³ м³ | 64.1 | 0.48 | 30.98 |
| 2 | E1-961 | III կարգի գրունտի մշակում ձեռքով Ручная обработка почвы III категории | մ³ м³ | 7.1 | 3.48 | 24.74 |
| 3 | E8-11 | Խճի նախապատրաստական շերտի իրականացում 10սմ հաստությամբ Выполнение подготовительного слоя из гравия толщиной 10 см. | մ³ м³ | 6.44 | 9.66 | 62.20 |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | E6-1 | Նախապատրաստական շերտի իրականացում B7.5 դասի բետոնից 10սմ հաստությամբ<br>Выполнение подготовительного слоя из бетона класса B7,5 толщиной 10 см. | մ³<br>м³ | 6.44 | 40.52 | 260.96 |
| 5 | E6-21 | Խամքարեբետոնե հիմքերի իրականացում B15 դասի բետոնով<br>Выполнение железобетонных фундаментов с использованием бетона класса B15 | մ³<br>м³ | 23.00 | 37.00 | 850.94 |
| 6 | E6-91 | Խամքարաբետոնից հենապատի իրականացում B15 դասի<br>Строительство железобетонной подпорной стенки класса B15 | մ³<br>м³ | 23.46 | 10.71 | 251.30 |
| 7 | E8-27 | Ջրամեկուսացում բիտումի տաք կրկնակի քսուկով<br>Гидроизоляция горячим двойным битумным покрытием | մ²<br>м² | 87.4 | 1.26 | 110.15 |
| 8 | E1-1634 | Գրունտի ետլիցք մեխանիզմով<br>обратная засыпка грунта механизмом | մ³<br>м³ | 31.1 | 0.08 | 2.48 |
| 9 | C310-1<br>տ.մ.կ 29<br>k=1.1 | Շին. աղբի և ավելորդ բնահողի բարձում ինքնաթափ մեքենաների վրա եւ տեղափոխում աղբավայր<br>Погрузка строительного мусора и излишков грунта в самосвалы и вывоз их на полигон | տ<br>т | 48.00 | 2.40 | 115.30 |
| 10 | E15-201 | Պատերի սվաղի իրականացում ցեմենտավազային շաղախով 1:3 հարաբերությամբ /ցանցով/<br>Оштукатуривание стен цементным раствором в соотношении 1:3 /с сеткой/ | մ²<br>м² | 184.00 | 2.30 | 422.71 |
| 11 | E15-523K=2 | Պատերի ներկում ֆասադային ներկով /երանգը համաձայնեցնել պատվիրատուի հետ/Покраска стен фасадной краской /цвет согласовываем с заказчиком/ | մ²м² | 184.00 | 2.05 | 377.13 |
| 12 | E15-70 | Բազալտե վրադիր քարերի տեղադրում 35մմ /առանց ծակոտկեն/<br>Монтаж базальтовых колпаков 35мм /непористых/ | մ²<br>м² | 32.20 | 41.49 | 1336.07 |
| | | **Ընդամենը տվյալ բաժնով**<br>**Итого по разделу** | | | | **3844.95** |
| | | **Կշիռ (%)**<br>**Процент (%)** | | | | **13.68%** |
| | | **Բազալտե եզրաքարերի տեղադրում 200x100 մմ չափերով-բետոնե հիմքով**/առանց ծակոտկեն/<br>**Монтаж базальтовых бордюров размером 200x100 мм - с бетонным основанием /без пор/** | | | | |
| 1 | E27-22-1 | Խճի նախապատրաստական շերտի իրականացում 5սմ հաստությամբ<br>Выполнение подготовительного слоя из гравия толщиной 5 см. | մ³<br>м³ | 0.360 | 3.35 | 1.21 |
| 2 | E27-83 | Բազալտե եզրաքարերի տեղադրում 200x100մմ չափերի<br>Монтаж базальтовых бордюров размером 200x100мм | գմ<br>пм | 48.0 | 5.59 | 268.21 |
| | | **Ընդամենը տվյալ բաժնով**<br>**Итого по разделу** | | | | **269.41** |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | Կշիռ (%)<br>Процент (%) | | | | 0.96% |
| | | **Ֆուտբոլի դաշտի կառուցում**<br>**Строительство футбольного поля** | | | | |
| 1 | E27-42<br>E27-42 -1 | 5 սմ հաստությամբ խճե շերտի իրականացում<br>Укладка слоя гравия толщиной 5 см | մ²<br>м² | 1104 | 0.64 | 711.77 |
| 2 | E6-1 | Ե/բ նախաշերտի պատրաստում B15 դասի բետոնից միջինը 5սմ<br>Подготовка ж/бетонного основания из бетона класса B15, в среднем 5 см | մ³<br>м³ | 55.20 | 44.66 | 2465.02 |
| 3 | E6-86 | Ամրանացանցի տեղադրում Φ5Bpl ամրանից<br>Монтаж арматурной сетки из арматуры Φ5Bpl | տ<br>т | 2.3100 | 26.91 | 62.17 |
| 4 | շուկա | Ամրանացանց Φ5Bpl, ք.150x150մմ<br>арматурная сетка Φ5Bpl, ш.150x150мм | մ²<br>м² | 1104.0 | 1.18 | 1301.62 |
| 5 | շուկա | Միաձույլ ռետինե ծածկույթի իրականացում 15մմ հաստ./հարթեցումը և փռումը իրականացնել հատուկ տեխնիկայի միջոցով//հարթեցում-տաքացվող գլդոն-կատոկ//փռում-հատուկ տեխնիկայի միջոցով/<br>Устройство монолитного резинового покрытия толщиной 15 мм/разглаживание и нанесение с помощью спецоборудования//разглаживание - нагретый каток//нанесение с помощью спецоборудования/ | մ²<br>м² | 1104.0 | 11.55 | 12755.91 |
| 6 | Գնահաշվարկ | Մետաղական ցանկապատի մոնտաժում h=4մ/իր դռնակով/ երկտակ յուղաներկումովУстановка металлического забора h=4м /с собственной дверью/двухслойная масляная покраска | գմпм | 24.0 | 50.11 | 1202.56 |
| 7 | Գնահաշվարկ | Մետաղական ցանկապատի մոնտաժում h=2մ երկտակ յուղաներկումով<br>Монтаж металлического забора h=2м с двухслойной масляной покраской | գմ<br>пм | 116.0 | 23.55 | 2732.03 |
| | | **Ընդամենը տվյալ բաժնով**<br>**Итого по разделу** | | | | 21231.09 |
| | | **Կշիռ (%)**<br>**Процент (%)** | | | | 75.53% |
| | | **Ֆուտբոլի դարպասի կառուցում/ 2հատ/**<br>**Строительство футбольных ворот /2 шт./** | | | | |
| 1 | E6-20 | Բետոնե հիմքերի պատրաստում B12,5 դասի ծանր բետոնով<br>Подготовка бетонных фундаментов из тяжелого бетона класса B12,5 | մ³<br>м³ | 1.008 | 46.98 | 47.36 |
| 2 | E 9-46 | Մետաղական դարպասի պատրաստում և տեղադրում<br>Изготовление и установка металлических ворот | տ<br>т | 0.23 | 170.24 | 39.15 |
| 3 | ինֆոր | Մետաղական կլոր խողովակ 76x4մմ<br>Труба металлическая круглая 76x4мм | գմ<br>пм | 16.7 | 4.10 | 68.42 |
| 4 | ինֆոր | Մետաղական կլոր խողովակ 48x3.5մմ<br>Трубка круглая металлическая 48x3,5 мм | գմ<br>пм | 25.6 | 1.83 | 46.78 |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | ինֆոր | Մետաղական թերթ 10մմ հաստությամբ<br>Металлический лист толщиной 10 мм | մ²<br>м² | 0.4 | 40.44 | 16.18 |
| 6 | E13-165 | Մետաղական մասերի երկտակ ներկում<br>Двухслойная покраска металлических деталей | մ²<br>м² | 46 | 0.62 | 28.34 |
| 7 | շուկա | Ֆուտբոլի դարպասի ցանց<br>Футбольные ворота | հատ<br>шт | 2 | 39.50 | 78.99 |
| 8 | շուկա | Ներկանյութ<br>Краситель | կգ<br>кг | 14 | 0.94 | 13.13 |
| | | **Ընդամենը տվյալ բաժնով**<br>**Итого по разделу** | | | | **338.36** |
| | | **Կշիռ (%)**<br>**Процент (%)** | | | | **1.20%** |
| | | **Արտաքին լուսավորություն**<br>**Наружное освещение** | | | | |
| 1 | E1-1545 | Գրունտի մշակում մեխանիզմով, կողալիցքով<br>Обработка почвы механизмом, боковая загрузка | մ³<br>м³ | 35.50 | 0.48 | 17.16 |
| 2 | E1-962 | Բնահողի մշակում /խրամուղում/, ձեռքով<br>Обработка почвы /рытье траншей/ вручную | մ³<br>м³ | 3.72 | 6.15 | 22.86 |
| 3 | 8-142-1 | Անկողնակի պատրաստում<br>подготовка постеляющего слойа | գմ<br>пм | 120.00 | 0.35 | 42.54 |
| 4 | E23-1 | Ավազ /ստորին և վերին պաշտպանիչ շերտ/<br>Песок /нижний и верхний защитный слой/ | մ³<br>м³ | 13.65 | 6.06 | 82.74 |
| 5 | 8-417-7 | Խողովակ վինիպլաստե Ի50մմ<br>Труба винилпласт Ф50мм | գմ<br>пм | 120.00 | 0.70 | 83.71 |
| 6 | E8-145-1 | ABBГ 2x10մմ² հատվածքով մալուխի անցկացում /ստորգետնյա/<br>Прокладка кабеля сечением АВВГ 2x10мм2 /под землей/ | գմ<br>пм | 120.00 | 0.40 | 47.76 |
| 7 | շուկա | Պաշտպանիչ /զգուշացնող/ ժապավենի տեղադրում 300մմ լայնքով<br>Монтаж защитной /предупреждающей/ ленты шириной 300 мм | գմ<br>пм | 120.00 | 0.29 | 35.37 |
| 8 | E1-1634 | Գրունտի ետլիցք մեխանիզմով<br>обратная засыпка грунта механозмом | մ³<br>м³ | 20.82 | 0.08 | 1.66 |
| 9 | E1-1184 | Գրունտի տոփանում<br>трамбовка грунта | մ³<br>м³ | 2.10 | 0.33 | 0.70 |
| 10 | E1-969 | Բնահողի ետլիցք ձեռքով, տոփանումով<br>Обратная засыпка естественного грунта вручную, трамбовкой | մ³<br>м³ | 4.76 | 1.78 | 8.47 |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 11 | C310տ.մ.կ 28 | Ավելորդ բնահողի եւ շին. աղբի բարձում ինքնաթափ մեքենաների վրա եւ տեղափոխում աղբավայրПогрузка излишков грунта и строительных отходов в самосвалы и вывоз их на полигон | տՈ | 20.50 | 2.45 | 50.13 |
| 14 | Գնահաշվարկ | Լուսավորության հենասյուների տեղադրում H=6.1մ/միաճյուղ/ Монтаж опор освещения H=6,1м/одноветвевая/ | հատ шт | 6 | 71.51 | 429.04 |
| | | **Ընդամենը** **Итого** | | | | 822.14 |
| | | **Տոկոսը ամբողջի համեմատ** **Процент по сравнению с целым** | | | | 2.92% |
| | | **Ընդհանուրը** **Итого** | | | | 100.00% |
| | | **Ընդամենը** **Итого** | | | | 28109.47 |
| | | ԱԱՀ, 20% НДС, 20% | | | | *5621.89* |
| | | **Ընդամենը** **Итого** | | | | 33731.36 |

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Թալինի համայնքապետարան
ՀՀ Արագածոտնի մարզ,ք.Թալին Գայի 1
ՀՀ ՖՆ Գործառնական վարչություն
ՀՀ 900462151045
ՀՎՀՀ 05030561
Համայնքի ղեկավար Տ.Սափեյան

---

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«Շին Կոնստրակտ» ՍՊԸ
ՀՀ ք. Երևան, Լենինգրադյան փ 12շ, բն 10
«Ֆասթ Բանկ» ՓԲԸ
Հ/Հ 2621379261721001
ՀՎՀՀ 01359835
Տնօրեն Ն. Ազբեկյան

---

/ստորագրություն/
Կ.Տ

«ԱԲԱԿ» ՍՊԸ
ՀՀ ք. Երևան, Սիլիկյան 1/20
<<Հայէկոնոմբանկ>>ԲԲԸ
ՀՀ 163028028518
ՀՎՀՀ 01222825
Տնօրեն Ա. Ժամկոչյան

---

/ստորագրություն/
Կ.Տ

*Հավելված N 3*
*«27» հոկտեմբերի 2025 թ. կնքված*
*ՀՀ ԱՄ ԹՀ-ԳՀԱՇՁԲ-25/135 ծածկագրով պայմանագրի*

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ
դրամ

| Աշխատանքի | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2025թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում** | | | | | | | | | | | | |
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 1 | 45211137 | Ն.Բազմաբերդի մինի ֆուտբոլի դաշտի կառուցման աշխատանքներ | | | | | | | | | | | 293400000 | 293400000 | 2934000[illegible] |

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Թալինի համայնքապետարան
ՀՀ Արագածոտնի մարզ,ք.Թալին Գայի 1
ՀՀ ՖՆ Գործառնական վարչություն
ՀՀ 900462151045
ՀՎՀՀ 05030561
Համայնքի ղեկավար Տ.Սափեյան

---------------------------------
/ստորագրություն/
Կ.Տ

«Շին Կոնստրակտ» ՍՊԸ
ՀՀ ք. Երևան, Լենինգրադյան փ 12շ, բն 10
«Ֆասթ Բանկ» ՓԲԸ
Հ/Հ 2621379261721001
ՀՎՀՀ 01359835
Տնօրեն՝ Վ. Այրեյան

---------------------------------
/ստորագրություն/
Կ.Տ

«ԱԲԱԿ» ՍՊԸ
ՀՀ ք. Երևան, Սիլիկյան 1/20
<<Հայէկոնոմբանկ>>ԲԲԸ
ՀՀ 163028028518
ՀՎՀՀ 01222825
Տնօրեն՝ Ա. Ժամկոչյան

---------------------------------
/ստորագրություն/
Կ.Տ

**FASTBANK**

E 26213-2141
24.10.2025թ

**ԲԱՆԿԱՅԻՆ ԵՐԱՇԽԻՔ N EB16000574-8**
**(որակավորման ապահովում)**

1.Սույն երաշխիքը (այսուհետ՝ երաշխիք) հանդիսանում է Թալինի համայնքապետարանը (հասցե՝ ՀՀ, ք. Թալին, Գայի 1 ) (այսուհետ՝ բենեֆիցիար) կողմից **«ՀՀ ԱՄ ԹՀ-ԳՀԱՇՁԲ-25/135»** ծածկագրով կազմակերպված գնման ընթացակարգի արդյունքում «ՇԻՆ ԿՈՆՍՏՐԱԿՏ» Սահմանափակ Պատասխանատվությամբ Ընկերության (գրանցման համար՝ 271.110.1438808, գրանցման ամսաթիվ՝ 12.02.2025թ. ՀՎՀՀ՝ 01359835, հաշվառման հասցե՝ ԼԵՆԻՆԳՐԱԴՅԱՆ Փ. / Շ / 2 / 10 ԲՆ. ԱՋԱՓՆՅԱԿ 0031 ԵՐԵՎԱՆ ԵՐԵՎԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ) ի դեմս Տնօրեն ՝ Նարեկ Հրաչիկի Ապրեսյանի (անձը հաստատող փաստաթուղթ՝ 007963994, տրված՝ 11.02.2016թ.-ին, 012-ի կողմից, հաշվառման հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Լենինգրադյան 2. 12, բն. 10 ) (այսուհետ՝ պրինցիպալ) կողմից կնքվելիք N ՀՀ ԱՄ ԹՀ-ԳՀԱՇՁԲ-25/135 պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար անհրաժեշտ որակավորման ապահովում (այսուհետ՝ երաշխավորված պարտավորություններ):

2. Երաշխիքով «Ֆասթ Բանկ» Փակ Բաժնետիրական Ընկերությունը (հասցե՝ 0047, ՀՀ, ք. Երևան, Նորք-Մարաշ, Գ. Հովսեփյան 32/6, էլ-փոստ՝ fastcare@fcc.am ) (այսուհետ՝ երաշխիք տվող անձ) անվերապահորեն պարտավորվում է բենեֆիցիարի՝ սույն երաշխիքով սահմանված կարգով և ժամկետում ներկայացված պահանջով (այսուհետ՝ պահանջ) բենեֆիցիարին վճարել **5,060,000 (Հինգ միլիոն վաթսուն հազար) ՀՀ դրամ** (այսուհետ՝ երաշխիքի գումար)՝ պահանջն ստանալուց հինգ աշխատանքային օրվա ընթացքում: Վճարումը կատարվում է բենեֆիցիարի 900465101096 հաշվեհամարին փոխանցման միջոցով:

3. Սույն երաշխիքն անհետկանչելի է:

4. Սույն երաշխիքից բխող բենեֆիցիարի՝ երաշխիքի գումարի վճարումը պահանջելու իրավունքը կարող է փոխանցվել այլ անձի երաշխիք տվող անձի գրավոր համաձայնության դեպքում:

5. Երաշխիքը գործում է թողարկման պահից և ուժի մեջ է բենեֆիցիարի և պրինցիպալի միջև N ՀՀ ԱՄ ԹՀ-ԳՀԱՇՁԲ-25/135 ծածկագրով կնքվելիք պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 09.01.2026թ.-ը ներառյալ: Սույն երաշխիքի բնօրինակից արտատպված տարբերակը երաշխիք տվող անձը երաշխիքը տրամադրելու օրը իր պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեից ուղարկում է նաև սույն երաշխիքի 1-ին կետում նշված ծածկագրով կազմակերպված գնման ընթացակարգի հրավերում նշված՝ գնահատող հանձնաժողովի քարտուղարի՝ talingnumner@mail.ru էլեկտրոնային փոստի հասցեին:

6. Բենեֆիցիարը պահանջը ներկայացնում է երաշխիք տվող անձին գրավոր ձևով: Պահանջին կից ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը՝

1) N ՀՀ ԱՄ ԹՀ-ԳՀԱՇՁԲ-25/135 ծածկագրով կնքված պայմանագրի, ներառյալ նաև դրանում կատարված փոփոխությունների, լրացուցիչ համաձայնագրերի պատճենները.

2) բենեֆիցիարի կողմից պայմանագիրը միակողմանի լուծելու մասին www.procurement.am հասցեով գործող տեղեկագրում հրապարակած ծանուցումը:

7. Երաշխիք տվող անձը բենեֆիցիարի կողմից ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը ստանալուց հետո առավելագույնը հինգ աշխատանքային օրվա ընթացքում քննարկում է ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը՝ սույն երաշխիքի պայմաններին դրանց համապատասխանությունը պարզելու համար:

8. Երաշխիք տվող անձը մերժում է բենեֆիցիարի պահանջը, եթե՝

1) պահանջը կամ կից փաստաթղթերը չեն համապատասխանում սույն երաշխիքի պայմաններին.

2) պահանջը ներկայացվել է երաշխիքով սահմանված ժամկետի ավարտից հետո:

9. Երաշխիք տվող անձը պահանջը մերժելու մասին որոշում ընդունելու դեպքում անհապաղ, բայց ոչ ուշ, քան նույն աշխատանքային օրը, մերժման մասին տեղեկացնում է բենեֆիցիարին:

10. Սույն երաշխիքի նկատմամբ կիրառվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի համապատասխան դրույթները:

11. Սույն երաշխիքի կապակցությամբ ծագող վեճերը ենթակա են լուծման Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

«Ֆասթ Բանկ» ՓԲ ընկերության

«Դավթաշեն» մասնաճյուղի կառավարիչ՝ Քրիստինե Ղուլախսզյան

E 26213-2142

24.10.2025թ.

ԲԱՆԿԱՅԻՆ ԵՐԱՇԽԻՔ N **EB16000574-7**
(պայմանագրի ապահովում)

Քաղաք Երևան

1. Սույն երաշխիքը (այսուհետ՝ Երաշխիք) հանդիսանում է **Թալինի համայնքապետարանը (հասցե՝ ՀՀ, ք. Թալին, Գայի 1 )**, այսուհետ՝ Բենեֆիցիար և **«ՇԻՆ ԿՈՆՍՏՐԱԿՏ» Սահմանափակ Պատասխանատվությամբ Ընկերության** (գրանցման համար՝ 271.110.1438808, գրանցման ամսաթիվ՝ 12.02.2025թ. ՀՎՀՀ՝ 01359835, հաշվառման հասցե՝ ԼԵՆԻՆԳՐԱԴՅԱՆ Փ. / Շ / 2 / 10 ԲՆ. ԱՋԱՓՆՅԱԿ 0031 ԵՐԵՎԱՆ ԵՐԵՎԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ) ի դեմս Տնօրեն ՝ Նարեկ Հրաչիկի Ապրեսյանի (անձը հաստատող փաստաթուղթ՝ 007963994, տրված՝ 11.02.2016թ.-ին, 012-ի կողմից, հաշվառման հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Լենինգրադյան շ. 12, բն. 10 ), այսուհետ՝ Պրինցիպալ, միջև կնքվելիք N ՀՀ ԱՄ ԹՀ-ԳՀԱՇՁԲ-25/135 պայմանագրից (այսուհետ՝ Պայմանագիր) բխող Պրինցիպալի պարտավորությունների (այսուհետ՝ Երաշխավորված պարտավորություն) կատարման ապահովում:
2. Երաշխիքով **«Ֆասթ Բանկ» Փակ Բաժնետիրական Ընկերությունը** (հասցե՝ 0047, ՀՀ, ք. Երևան, Նորք- Մարաշ, Գ. Հովսեփյան 32/6, էլ-փոստ՝ fastcare@fcc.am) (այսուհետ՝ Երաշխիք տվող անձ) անվերապահորեն պարտավորվում է Բենեֆիցիարի՝ սույն Երաշխիքով սահմանված կարգով և ժամկետում ներկայացված պահանջով (այսուհետ՝ Պահանջ) Բենեֆիցիարին վճարել **3,374,000 (Երեք միլիոն երեք հարյուր յոթանասունչորս հազար) ՀՀ դրամ** (այսուհետ՝ Երաշխիքի գումար)՝ Պահանջը ստանալուց հետո՝ 5 (Հինգ) աշխատանքային օրվա ընթացքում:
Վճարումը կատարվում է բենեֆիցարի **թիվ 900465101096** հաշվեհամարին փոխանցման միջոցով:
3. Սույն Երաշխիքն անհետկանչելի է:
4. Սույն Երաշխիքից բխող բենեֆիցարի՝ երաշխիքի գումարի վճարումը պահանջելու իրավունքը կարող է փոխանցվել այլ անձի երաշխիք տվող անձի գրավոր համաձայնության դեպքում:
5. Երաշխիքը գործում է թողարկման պահից և ուժի մեջ է բենեֆիցարի և պրիցիպալի միջև կնքվելիք N **ՀՀ ԱՄ ԹՀ-ԳՀԱՇՁԲ-25/135** պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 13.04.2027 թվականը ներառյալ: Սույն երաշխիքի բնօրինակից արտատպված տարբերակը երաշխիք տվող անձը երաշխիքը տրամադրելու օրը իր պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեից ուղարկում է նաև սույն երաշխիքի 1-ին կետում նշված ծածկագրով կազմակերպված գնման ընթացակարգի իրավերում նշված՝ գնահատող հանձնաժողովի քարտուղարի՝ talingnumner@mail.ru էլեկտրոնային փոստի հասցեին:
6. Բենեֆիցարը պահանջը ներկայացնում է Երաշխիք տվող անձին գրավոր ձևով: Պահանջին կից ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը՝
1) **ՀՀ ԱՄ ԹՀ-ԳՀԱՇՁԲ-25/135** պայմանագրի, ներառյալ նաև դրանում կատարված փոփոխությունների, լրացուցիչ համաձայնագրերի պատճենները,
2) բենեֆիցիարի կողմից պայմանագիրը միակողմանի լուծելու մասին www.procurement.am հասցեով գործող տեղեկագրում հրապարակած ծանուցումը:
7. Երաշխիք տվող անձը բենեֆիցիարի կողմից ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը ստանալուց հետո առավելագույնը հինգ աշխատանքային օրվա ընթացքում քննարկում է ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը՝ սույն երաշխիքի պայմաններին դրանց համապատասխանությունը պարզելու համար:
8. Երաշխիք տվող անձը մերժում է բենեֆիցիարի պահանջը, եթե՝
1) պահանջը կամ կից փաստաթղթերը չեն համապատասխանում սույն երաշխիքի պայմաններին,
2) պահանջը ներկայացվել է երաշխիքով սահմանված ժամկետի ավարտից հետո:
9. Երաշխիք տվող անձը պահանջը մերժելու մասին որոշում ընդունելու դեպքում անհապաղ, բայց ոչ ուշ, քան նույն աշխատանքային օրը, մերժման մասին տեղեկացնում է բենեֆիցիարին:
10. Սույն երաշխիքի նկատմամբ կիրառվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի համապատասխան դրույթները:
11. Սույն երաշխիքի կապակցությամբ ծագող վեճերը ենթակա են լուծման Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

«Ֆասթ Բանկ» ՓԲ ընկերության

«Դավթաշեն» մասնաճյուղի կառավարիչ՝ **Քրիստինե Ղուլախսզյան**